

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

12 մարտի 2019թ.  
ք.Երևան

N 22-Ա

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ՇԵՆԳԱՎԻԹ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԴԱՏԱԽԱՂԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության դատախազության Շենգավիթ վարչական շրջանի դատախազի 25.01.2019թ. N 57/Մ-19 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. 2018 թվականի դեկտեմբերի 14-ին թիվ 8 տարածքային ընտրական հանձնաժողովը գրությամբ դիմել է ՀՀ դատախազություն՝ հաղորդելով, որ թիվ 8/51 ընտրական տեղամասում նույն անձը երկու անգամ օգնել է քվեարկողներին: Շենգավիթ վարչական շրջանի դատախազի 25.01.2019թ. N 57/Մ-19 գրությամբ հաղորդվել է, որ «նյութերի նախապատրաստման ընթացքում ձեռք բերված փաստական տվյալներով պարզվել է, որ 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայացած Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ, Շենգավիթ համայնքի թիվ 8/51 ընտրատեղամասում, նշված ընտրատեղամասի հանձնաժողովի նախագահ Քրիստինա Նեբոգովան՝ թույլատրելով նույն անձին օգնել՝ ինքնուրույն քվեարկելու հնարավորություն չունեցող երկու ընտրողի՝ թույլ է տվել ՀՀ ընտրական օրենսգրքի 67 հոդվածի 9-րդ կետի խախտում»:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 67-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ «Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ, դիտորդ, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ, այցելու: Անձն իրավունք ունի օգնելու քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող միայն մեկ ընտրողի: Բացի նշված դեպքից, քվեաթերթիկը լրացնելիս քվեարկության խցիկում այլ անձի ներկայությունն արգելվում է: Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին օգնող անձի տվյալները գրառվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2019 թվականի մարտի 12-ի նիստին ներկայացած թիվ 8/51 տեղամասային հանձնաժողովի նախագահի պարզաբանմամբ՝ քվեարկության օրը տեղամասում պարբերաբար առաջանում էր ինքնուրույն քվեարկելու հնարավորություն չունեցող ընտրողներին օգնելու անհրաժեշտություն: Քննարկման առարկա հանգամանքներում տարեց ընտրողն օգնողի կարիք ուներ, ինչի մասին բարձրաձայնել է՝ արդեն իսկ գտնվելով քվեախցիկում: Այդ պահին մեկ այլ քվեախցիկում որպես օգնող գրանցված քաղաքացին օգնում էր քվեարկելու մեկ այլ տարեց ընտրողի: Քանի որ այդ պահին քվեարկության սենյակում առկա չէր որևէ անձ, ով կարող էր հանդես գալ որպես օգնող, կանխելու համար առանց քվեաթերթիկը ծրարի մեջ տեղադրելու տարեց ընտրողի քվեախցիկից դուրս գալը, նախագահը խնդրել է որպես օգնող արդեն իսկ գրանցված անձին օգնել նաև մյուս տարեց ընտրողին:

Ք. Ներգոզվան նշեց, որ ընդունում է իր սխալը, ինչը պայմանավորված էր ստեղծված իրավիճակում օպերատիվ լուծում տալու անհրաժեշտությամբ:

Գնահատելով վերոգրյալը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 8/51 տեղամասային հանձնաժողովի նախագահ Քրիստինա Ներգոզվան թույլ է տվել Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 9-րդ մասի կանոնների խախտում:

Ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 21-րդ կետի համաձայն՝ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ (...) ուժը կորցրած է ճանաչում ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը, եթե համապատասխան որակավորման վկայական ստացած անձի կողմից խախտվել են սույն օրենսգրքի պահանջները.»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 21-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

## **Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Ուժը կորցրած ճանաչել թիվ 8/51 տեղամասային հանձնաժողովի նախագահ Քրիստինա Ալեքսանդրի Ներգոզվայի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱԸ**

**S. Մ ու կ ու չ յ ա ն**

